

ՈՒՄՈՒՐԸ ԲՕԼԻԹԵԳԸՅՅԷ ԳԻ ՄԷՎԼՏՏԸ ԱՆՅԻՆԷ

իլանաթըն Էլէկէր սաթըրը
պիրիճնէ տէֆա Յ, իբնէն
սէֆա 2, վէ իւլէնճի
վէ սայրը սէֆալարը իշին
1 Ղշ. վէ իլան սրբասըն
գծնուլմանան իլանըն սա
թըրը 3 Ղշ. սուրը

Մէլթուլ վէ սայրի
Գալթուսան Բէնճէմալի
Բաշարընտը վազը Ն, 4
իսթի Գալթուսան իսթի
սթան Ե. ֆաիստան իսթի
նէ Կէօնտէրիլէճէր տիր :

v. 2789

8 18	»	6 »	7 55	»	5
10 50	»	8 »	11 25	»	7

—Միւղաւտտէմճէ մուլաղգաթէն
աթիլի միւղաքէրաթ իտէն բօթիա
միսիտնու պաղը խոսուսաթը տա-
միւղաքէրէ իթմէք իւղըն ալին-

Պու մաքինա ֆէզէէւտէ տէրէճէ-
է ուճուդ տուր, չիւնքի 6 պարկիր
ուզվէթ ինտէ օլարադ իմալ օլուն-
ուզու վէ պէճէր պարկիր իչին էա-
նըզ 50 ֆորանդ դատար մատարփը
նճիպ օլտուղու ճիճէթէ 6 պարկիր
ուզվէթ ինտէ պիր մաքինա 300 ֆը-
նդ տ չըզ մազ տա տրը . հապոււ չի 6
արկիր դուզվէթ ինտէ տիկէրպիր տտի
քինա իսէ 2500 ֆըրանդ տան 3000

Պուլ պիւնանըն տէօրթ քէօշէսինտէ պիրեր քէօք պուլունուպ, պիւնանըն մէր.քէզլինտէ տիլէր ի.քի քէօք վար տըր : Պու սէպէպտէն տօլտեը պու պիւնանըն մէնզարէսի բէ.ք ալէա տըր: վէսրուսար իսէ պիր ազ աշաղըեա մէյիալ պուլունտուղունտան, միւրէպպա բէնէրէլէր իլէ պօթրումլար տախի եաբըլըշ տըր : վէ պունլարտան մաստա երիւսատաւէթտէ տէօբլւլվիւշ տէմլր արմապլըգլար տախի վար տըր : Պու թօթրումլար իւզէրինէ ի.քի գալթ պիւա եաբըլմըշ տըր : Պիւնանըն տէօրթ արուսու օլուպ, բէ.ք կէնիշ նէրաիւսնլարը տախի վար տըր : Բէնճէրէլէին մըգտարը իւշ եիւզ գասար օլուպ, ունլար հէր նէ գասար ատի կէօրլւլէ.քտէ իսէ տէ, ելինէ կիւզէլ վէ միւսախպէլի իտիր : Պիւնանըն պաշլըճա արունունտա գալթ ճարէթի թաճարիւնէ մախտուս.քէօք վէ պու.քէօշին իւզէրինտէ տախի բէ.ք կիւզէլ վէ ճէյիւ.քթուղըայի հլւմանուս վէ պուուն տրգաորնտա տախի պիր չահհին.յն պուլունմապաա տըր : Պէօյիւ.ք արուտան պիւնանըն իշէրիսինէ կըրիւ.քտէ, ճէսամէթի տախիլիէսի պիր.էն պիրէ անլաշլըր : Պիւնանըն իշէրիւստէ ախշապ իսթ իմալ օլունման արապ.

‘Ṣ ḥ ḳ ṭ Ṣ ḥ

— Թէի՞նք վէ չիէ՛ք խառթաւըղըն-
ան շիմօղիւրտէ Զին վէ ձաբօնտա
իր չօգ թէէնֆաթ վուգուա կէլմէ, ք-
է տիր : Օրաւարըն հէքիմէրի չիէ՛ք
ասթաւըղը՝ ա հէհմիհէթ վիրէհէ՛ք
էրտէ , պիւաքս չիէ՛քտէն թուլու-
նըաւը կիւեա սէմատտան հազգւա-
նտա պէյլիւք պիր իկյիմէմ մազա-
նտա աստ իտիհօրար :

Եստեան տէրէթի մէարիֆ րէ.

Բայց մեր ընտանեկան կեանքը . նոյն իսկ կոոստանդնուպոլսոյ շրջանակին մէջ, յորում կը համարին լինել ազգիս լուսաւորութեան կեդրոնը , տեսէք տեարք իմ, տեսէք , ո՛րչափ յետնութիւն , քանի՛ քանի ստորնութիւնք , որպիսի՛ անտեղութիւնք մեր ընտանեկան կենաց մէջ . հայ կանայք , — խիստ աննշան բացառութեամբ , — բնաւ չեն անտեղեակ են տանտիկնութեան , առտնին տնտեսութեան և համեստ ու չափաւոր կենաց . զեղխութիւն , տնաւեր շտայլութիւնք և անխցիլ պճնասիրութիւնք համոճարակ ախտ եղած են առ կանայս մեր . տոկուսին մանկական օրօրոյցներու ջրվլլուսամետ մարք յոյժ սակաւաթիւ են , չկան կամ խնայող հագուազիւտ են նոքա որ մայրենի դուրսմանց հետ որ բնական է՝ օրտի և հոգւոյ կրթութեան խնամք ալ ունենան իւրեանց մատղաշ զաւակաց վրայ . յաճախ իսկ առ ազիտութեան մտ յնցողոի մտահաճութեան ծնողաց, տղայք բոլորովին զուրկ կը մեծնան առողջաբանական դարմաններէ , և այսպիսեալ հոյ պատանիք և երիտասարդք մեծաւ մասամբ վտիտ ու վատառողջ , անարիւն և ըմբոխ կը լինին . ընտիր առնակին մը մեծ լարեւրաստութիւն կրնայ յարդարել իւր աշխատուող աւուանդին և բարի օրինակ լինել գեռահասակ զաւակացը . բայց ադէ , ո՞րք ի ձէնջ պիտի կարենայ կամ դանի՛ հոգի պիտի յաճողի թուել և ցոյց տալ մեր կանանց մէջ այնպիսի տնայէն բարեմասնութեանց տէր առնականայս . — ըստ քիչ են , շատ քիչ , մինչև իրաւամբ համարել թէ չկան իսկ , հարք , տեարք իմ, ըստ մեծի մասին անգիտակ են անական տեսչութեան , ընտանեկան ուղղութեանց , վայելուչ խնայողութեան և քաղաքավարական օրինաց իսկ . զրկողութիւն կարեւորաց , լայլութիւն առ անպիտանս , տարապարտ նախանձ և ազգի ազգի մոլուսթիւնք՝ ամուսնաւոր արանց բարքը կը կազմեն առ մեզ . կը սիրեն տեսնել իւրեանց ընտանիքն յամենայնի տգէտ, անաւից անտեղեակ և միանգամայն անհիշող ու համեստ . . . , կը կուրացնեն կամ կոյր կը պահեն զնոսա , միմիկ սեւեկաց մէջ կը հրամայեն փակուիլ միւս

ման աշխարհը ազգայնաց կամ թէ սա-
գաց պարարին և՛ գիրանան և ահա այս
պատճառաւ խեղճութիւն և գոյութե-
թիւն պակաս չեն ընտանեաց մէջ մին-
չե իսկ յաճախ կ'ուծանան ամուսինք
ի միմեանց, ընտանեկան սէրը կը ցրը-
տանայ կը սառնի, և ապա ի հարկէ ընդ-
փոյթ կուգան կը յաջորդեն բաժանու-
մին և եղծութիւնք: Իսկ հայ երիտա-
սարքը, խիստ մեծ մասամբ անուսումն
և անարուեստ կամ ծայլ և գատարկա-
պորտ, ոչ ինչ նուազ տխուր մաս մը
կը պատկերեն մեր ընտանեկան կենաց
տեսարանին վրայ: Գոյութիւն և ծան-
ծաղամտութիւն՝ նոցա զարդարանքն
են, բարձրալիզ հպարտութիւն առ-
անծանօթս, նուաստախոհ և ստոր-
նադոյն հայցուածք յորմէ անկախնն,
անչափ զբօսասիրութիւն և յաճախ
իսկ քսմեղի ապականութիւնք բա-
րուց, այսոքիկ են ահաւասիկ մեր ե-
րիտասարդաց շատին ընտիր ընտիր
բարեմասնութիւնքը: Եւ այսպիսիք
հայր պիտի լինին և զաւակ պիտի
կրթեն: . . . ո՛վ յետնոյ չուսուս-
թեան աղդիս: Բայց սակայն մայր պի-
տի լինին հայ օրորդք ալ, որոց. —
միշտ աննշան բացառութեամբ. —
դաստիարակութիւնն ոչ ինչ ընդհատ
է կապկական միմասութենէ, յինքեանց
ոչ ինչ կը բղիթի, սիրտ չունին, հոգի չու-
նին, պառաւական մտահաճութեամբ
չառնոյ ուղեղները չաղախեալ են: Եւ
միթէ հնար ինչ է, զի յղջական ըզ-
քանարիկ ծնանի, կամ խլուրդք
զարծուիս անուցանեն:

Եւ երբ, տեա՛րք, մեր տեսութեան
ծիրն ընդարձակելով՝ կոստանդնուպո-
լոյ յրժանակէն դուրս տարածեմք մինչ-
յայտնայ ախանջ Դանգեսի, և ան-
տի ի խորս եգիպտացոց աշխարհին,
ի վերնախորժանս Դանուր գետոյ և ի
կովկասեան գօտիս, չուրջ պատեալ ըզ-
թըքահայս, զուստընական և որք ի
Պարսից աշխարհին են օտարացեալք,
երբ այս ընդարձակած աւալ տարածու-
թեան մէջ, ուր կ'ընթանայ ցոյսօր ա-
նուն Արամեանցս, մեր ազգին հանրա-
կան կենաց պատկերն աչաց առջև կ'ու-
նենամք, կը տեսնեմք մեր զազգն մեր
ը բաղում տեղիս կայտ և տառապե-
ալ, նկու և ընկճեալ, օտարացեալ
և ազգային լեզուաւ և ազգութեան
ողուով, մինչև իսկ արեւելեան հայք
զարեմտեանս չեն ճանաչեր չեն հաս-
կանայր, և հիւսիսաբնակք զհարաւա-
յինս չեն գիտեր չեն իմանայր, մինչև
անգամ շատք խիստ շատք անտեղեակ
են բնակին՝ թէ ո՛ր և ուր անկեալ և
վտարեալ են Հայկազունք. — բայց,
ի՞նչ քիչ Բարձրեւոյն, ա՛յնքան ահաւոր
դժբախտութեան թօնակեցաց ներքեւ,
Հայաստանեայց եկեղեցւոյ դրօշն, զոր
ձուռէն ծուռէն պատառելով յուսացին և
կը յուսան, հոգւոյ վերկութեան հետ
. . . ազգային վերկութիւն և բար-
դաւաճանք, ցոյսօր պարգեալ կը ծա-
ծանի բարձրութիւն: Եւ մինչդեռ ի
ձեռն բախտին՝ լերինք և անտառք,
աշխարհք և անապատք կ'անջատեն և
մասն մասն կը բաժանեն զձօնն թա-
ղէտեան, մինչդեռ Հայք լեզուաւ և
ողուով չեն համախմբիր Արարտայ
բարձանց չուրջը, և մինչդեռ այլուստ
նենգք և խաբէութիւնք կը գործեն
անդուլ անդադար, փառք Տեառն,
դեռ ևս ի չորից ծագաց հայկեան ա-
ղօթից բաղմաբերան միմեանց լուսա-
ւորչի տաճարը կը թնդեցնեն ցոյսօր-
Այսպէս ահա կը տեսնեմք մեր զազգն
մեր բաղում ուրեք անպաշտպան և
թշուառ, բաղում ուրեք նստեալ ի

խաւարի և ի ստուերն տղիտութեան,
ամենուրեք անգործութիւն և կարօ-
տութիւն բազմաց, ամենուրեք յուսու-
կորոյս տաղանապ, լքում և վճատու-
թիւն ամէն կողմ:

Բայց ուստի՞ են այս ամենայն, տեսա՛րք
իմ, առ ի՛նչ արդեօք ա՛յսքան նսեմա-
յեր է ստորն Հայկազանց. — գիտեմք,
ազգին այսքանոյ յետնութեան լեր
պատճառ բաղում ինչ ցոյց կուտան
ընդհանրապէս, զոր օրինակ՝ ազգը
աղքատ է, կարօտ է հացիւ, քաղա-
քական անկախութիւնը կորուսած է,
և այլ նոյնպիսիս. բայց ևս, նման դօ-
րաբանակի մ'ապարապետին՝ որ պարտ-
եալ գնդի մը հրամանատարն ի հար-
ցափորձ կոչելով կը հարցանէր նմա՛ թէ
ինչ պատճառաւ կորսնցուցիք ճակա-
տամարտը. — Ծատ պատճառներ ունե-
ինք, տէր, պատմականց զօրապետը,
նախ՝ վասն զի վառօք չունէինք. . . .
— բաւական է, կը գոչէ ապարապետը,
Բաւական, այլ ինչ չեմ խնդրեր. այս-
պէս և ևս, տեսա՛րք, այլ ինչ չեմ հար-
ցանք, դպրոց չունիմք. — բաւական
է. ա՛յո, բան մ'եմք կը պակասի մեզ
և ամենայն ինչ կը պակասին, բան մը
միայն չունիմք, և ոչինչ ունիմք, դպ-
րոց. ա՛յո, տեսա՛րք, ամենայնի պատ-
ճառ սա՛ է թէ դպրոց չունիմք, և բը-
նաւից դարման այն է զի դպրոց ունե-
նամք: Այնպէս կը նկատեմք ես, տեսա՛րք
իմ, այնպէս կը խորհիմք թէ չիք և չիք
հնար լուսաւորութեան և զարգացման
աղդիս, մինչև որ դպրոցներէ չապա-
սեմք լոյսն ու զարգացումը, մինչև որ
յամենայնի այն խոնարհ յարկերուն չը
լինիմք յուսադիր և անկախու: Երբ
կը մտածեմ ազգին բազմապատիկ լըշ-
ուառութիւնքը, երբ այնքանի տա-
րապալման դժբախտութեանց փոխոր-
կին մէջ հազիւ ուրեքն կը մտը լոյսի
կ'ենեմ խոհականութեանս գողաթը,
և աչերս չուրջ յաճեալ վերկութեան
հնար մը կը խնդրեմ յամենուստ, և
տհա մտացս յանդիման ցածուն յարկ
մը կը նկատեմ, դպրոցը. հո՛ն և եթէ կա-
րելի կը համարեմ զերծուցանել հայկա-
աշանցս նաւը, հո՛ն միայն հնար կը հաշ-
ուիմ անեղ վերկը լուսաւորեան հօտը:

Կ'ըսեն թէ, բա՛, տեսա՛րք, ազգը
աղքատ է, հացի կարօտ է. օ՛ն, ընդու-
նիմք պահ մը՝ թէ յիշաւի աղքատ է
ազգը. բայց միթէ ինչ հետ կ'ընդու-
նիմք և դուք այն թիւը կարծիքը՝ թէ
աղքատութենէն հետեի կարօտութիւ-
նը: Դարձեալ աղքատ է, բա՛, ազ-
գը. այլ ոչ եթէ՛՝ վասն զի աղքատ է՝
կարօտ է, այլ կարօտեալ է, վասն զի
անգործ է, անուսումն անարուեստ է.
այսոքիկ են ըստ իս ազգին կարօտու-
թեան իսկական պատճառ: Եւ միթէ
աղքատութիւնն արդե՛ր ինչ է զար-
դանալ մտաւորականին: Բայց, տեսա՛րք,
ուստի՞ պիտի բղիթեմ ազգին նիւթա-
կան մեծութիւնը. — պատմութիւնը ցոյց
տուաւ մեզ՝ մտաւոր և բարոյական մե-
ծութեամբ նիւթական մեծութիւն,
այլապէս չիք հնար. ուստի՞ ուրեքն պի-
տի բարդաւաճի ազգը նիւթապէս. և
երբ շատք ազգին նիւթական մեծու-
թեանը կ'ապասեն, նման անմիտ շինա-
կանին որ գետէ մ'անցնելու համար,
բոլոր ջրոց սպառելուն կ'ապասեն, որ-
պէս զի այնուհետեւ մտաւորականին ևս
ջանան և վատակին, այսինքն՝ երբ
շատ գործունեայք՝ առանց մտաւորա-
կան զարդացման նիւթապէս զարդա-
ցումը կը յուսան, կամ առանց պատ-
ճառի արդիւնք կ'ապասեն, աւելի բա-
նաւոր չլինիր միթէ, զի մտաւորն
նիւթականն յուսան, հնարաւորը խոր-

հած չեն լինիր արդեօք, զի պատ-
ճառէ արդիւնք սպասեն, և ոչ յար-
դեանի՞ պատճառ: Պատմական ան-
ժխտելի իրողութիւնք նոյնպէս չա-
պայտցին մեզ, ուղղամտութիւնը
նոյնը չհաստատե՛ր միթէ: Բայց առ ո-
րո՞վ համեմատութեամբ ազգը աղ-
քատ կը համարին. — ո՛չ ապաքէն առ-
եւրոպական ազգաց. խիղճս և միտքս
կը վկայեն միաբան՝ թէ մտաց աղ-
քատութեան արդիւնք է այսպիսի
համեմատութիւն մ'ընելը: Բայց եթէ
կան այնպիսիք որ այլապէս մտածեն
և այլուստ երեցնեն ազգին աղքա-
տութիւնը, վասնոր ցոյց կուտամ
նոցա, մեծատունները կը ցուցնեմ նո-
ցա մասնանիչ:

Կ'ըսեն թէ, տեսա՛րք, քաղաքական
անկախութիւնը կորուսած է ազգը.
Բայց ի՛նչ փոյթ մեզ անտի, աշխարհա-
քաղաքացի լինելու միտք արութիւնն
ունիմք այսօր, ժամանակն և պարա-
դայք ուսուցած են մեզ արդէն հաշտ
ունել հայրենասիրութիւնն ընդ հաւա-
տարիմ հպատակութեան. ստա՛ր մեզ
զինչ արդե՛ր ի մտաւորական յառաջա-
դիմութիւն. և միթէ նուա՞ղ յուսա-
լից է այն խոստումն զոր ապագայն
կը խոստանայ քաղաքակրթելը:

Ո՛ր կը մնամք մեր յայնժամ. . . .
Ո՛չ, տեսա՛րք իմ, ոչ. այս ամենայն
հիշանգ. գլխոց մտտի պատճառարա-
նութիւնք են, «անհաւատ և դանդա-
շանայ բանք տիմարաց մտաց կար-
կատեալք», և ոչ այլ ինչ. մեր ազ-
գին համար եթէ վերկութեան հնար
մը կայ, այն ալ դպրոցն է. ազգային
կեդրոնական բարձրագոյն ուսումնա-
րան մ'ունենամք ի կոստանդնուպո-
լիս, օրինաւոր վարժապետանոց մը
գործեալ ի կոստանդնուպոլիս, քանի
մ'արուեստանոց, բայց մասնաւորա-
պէս տանի չափ երկրագործական
վարժարաններ ի Բարձր Հոյս, ի վաս-
պուրական, յԱյրարատ, ի Պարսկոհայս,
ի Կապադովիա, ի Կիլիկիա, ի Ռու-
սաստան, յԵգիպտոս և այլուր, բա-
ւական է, ազգային յառաջադիմու-
թեան դարեմուտն հասած է յայնժամ:
ուսուցանեմք նոր սերունդը, ուսուցա-
նեմք հայ մանկանց ազգին կրօնքն, ազ-
գին լեզուն և պատմութիւնը լուսամիտ
և հմուտ ուսուցչաց ձեռօք, շա՛տ է,
յայնժամ հորդած պիտի լինիմք մեր
առջև ճշմարիտ քաղաքակրթութեան
ճանապարհը: Զե՛մք դիտել միթէ,
քանի մը սրբազան աշխատաւորք, ի
սկզբան անդ. Նի դարու, հայկեան ալ-
կաբեաքը հնարեցին, և իբր յիս-
նամեայ ժամանակի մէջ, հայկական
դրուոր պանծալի բարբառը բերին
ընծայեցին ազգին հինաւորեց ժամա-
նակաց ծոցէն. չե՛մք տեսնել միթէ,
երկու հայկապ դպրոցք դարուս մէջ
նոյնը կը մաքրեն կը սրբեն ի դարաւոր
խանդաղմանց, և վերադառն ոսկեղինիկ
ժամանակին ազնուութեան կը բարձ-
րայնեն զոյն տակաւ: Այսպէս տհա,
տեսա՛րք, ամենազգի բարձրութիւն
դպրոցական յարկերէ կը բղիթին:

Ժամանակն եկած հասած է այլ ևս,
տեսա՛րք, զի ազգը իւր խորին ուշայ
հարկաւորագոյն խնդրոյն վրայ դար-
ձնէ, ժողովուրդն իւր առաջին լու-
մայն կրթութեան զանձանակը ձգէ.
մեր ազգին հանդերձեալ բախտը մեր
մանկանց այժմու դաստիարակութենէն
կախեալ է, պատմութիւնն առ այս
վկայ եւաւ մեզ: Ժամանակ է այլ ևս,
ո՛ր լուսամիտ կղերականք, զի ձեր սրբ-
բաղան ազգեցեալութեամբ միշտ և հա-

նապաղ դրդէք վառէք ժողովուրդն
այս կարեւոր և ազգային գործոյն.
արժան է, ո՛ր գրագետք, զի ձեր մը-
տաց բոլոր աշխուժիւն խոնջիք տքնիք
ազգային տղայոց կրթութեան համար.
արժան է, ո՛ր զգոն հրապարակօք,
զի զօրհանապաղ ձեր թերթերուն մէջ
քանի մ'էջեր նուիրէք մանկանց դաս-
տիարակութեան. արժան է, ո՛ր լրջա-
միտ գործունեայք, զի յառաջ քան
զամենայն և առաւել քան զամենայն
կրթութեան խնդրոյն վրայ խորհիք
խօսիք և գործէք արիարար. ժամէ
արդ, ո՛վ վարչիչ ժողովրդեանս, զի
վանական և եկեղեցեաց նկուղներուն
մէջ ազգին թաքուցեալ քանքարաց
իշխէք այլ ևս, և՛ նման հաւատարիմ
ծառայից՝ վաշխէք տոկոսէք զնոսա ի-
մաստութեամբ և տալք տանապատիկ
հարկաւորապատիկ չափեալ տեսուն ձերում:
Ժամէ արդ, ո՛վ մեծատունք, զի
գէթ ձեր սեղանէն անկեալ փշանքն
հայ մանկանց կրթութեան նուիրէք.
պարտ է և ձեզ, ո՛ր հարք և մարք,
զի նախ քան զամենայն ինչ փոյթը
նէք ձեր զաւակաց դաստիարակու-
թեան, առաւել քան զամենայն պի-
տոյս՝ զգացուցէք ձեր որդւոց կրթու-
թեան պէտքը, յառաջ քան օժտելու
զազկունս ձեր՝ օժտեցէք զնոսա մը-
տաւոր և բարոյական զարգացմամբ:

Այսպէս, և՛ ոչ այլապէս, պիտի սկսի
ազգային յառաջադիմութեան գործը:

23 մարտ 1875

Ի կոստանդնուպոլիս

ՏէՖԱ. ԵԻԻՁՏԷ. ԵԻԻԻՐՄԻ ՊԵՇ ԹԷՆՁԻՎ

Իշտու պահար մէվսիմին
տէ Ամերիկան մաղապարտ
տա եւարդաւադ օրսն ճամէ
բեան վէ տէսթիւհաւէրէ
էէր աչըլմուդ իշիւն Ս. Մ.
Մինասեան վէ Գոււմ. քէնտի
մալէրինի վէ Լիթըւ վան
ցէր թապիր օլունանտան
մատաւ ճէմի տիբիլ մարի-
նալէրինի տախի եիւղոնէ եի-
կիւմի պէշ թէնդիլիէ ֆի-
րուսթ իյլէէէէէէէէր, իշ-
պու մարթ աչըն իպթիտա-
պնտան պաշտեարադ նիտա-
նըն եիկիւմիպնէ գաուար:

Ալէա մատաւրօլ վէ ամէ-
րիկան պէղլէրի, պէհազ վէ
էսմէր տիմի մատաւրօլլէր,
վէ թիւլլիւ տիմի, տէօշէմէ-
լիք բէմիս վէ տամապօ,
սուֆրա պէղլէրի վէ բէշ-
կիլէր, էն ալէա վէ էնլայի
տիբիլ մալիւմալէրի, կիւղէ-
րէսիմոն թիմուր գաւրօլա-
լար վէ հէր չէշիտ պէհազ
չինի թապաղաւոր վէ սայրի-
վէ սայրի, ճիւմէսի ալէա
տէ գիլըր օլունան թէնդիլ իլի-
ֆիլուսթ օլունաւադ:

Եւի դրուշտան էքսիքսա-
թիլա իշպուլ թէնդիլ օլուն-
մաւաւադ:

Սոհիպ Դաղլիս
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՆՈՍԵԱՆ
Գաղթաւոր Բնակչիկ Բարձրորոտ
Նուկրօ 41 Խախ խաշընտա